№ 20. ՄԱՅԻՍԻ 23. 1874 ՄԱՅԻՍԻ 23. № 20.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ, Редакція „Мшакъ.“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից մի կոպէկ։

Մեր ստորագրողներին խնդրում ենք հասցնել մեզ „Մշակի“ տարեկան վճարը անպատճառ մինչև ՅՈՒԼԻՍ ամիսը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսի „Մասիս“ լրագիրը։—Ներքին տեսութիւն։ Մի նկատողութիւն։ Նամակ Գանձակից։ Նամակ Նոր-Նախիջևանից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Պարսկաստան։ Նամակ Փարիզից։ Նամակ Կ. Պոլսից։ Նամակ Սալմաստից։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։ — Տեղեկացույց։

Կ. ՊՕԼՍԻ «ՄԱՍԻՍ» ԼՐԱԳԻՐԸ

Կ. Պոլսի „Մասիս“ լրագրի 1526 և 27 համարներում տպվեցաւ Թիֆլիսի „Մեղու Հայաստանի“ լրագրի խմբագրի, պ. Պ. Սիմէօնեանի նամակը, որ ուղղած է Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան դէմ։ Սիմէօնեանցի մասին մենք աւելորդ ենք համարում խօսել, շատ բնական համարելով այն մղձը, որ թափում է պատուելի պարոնը իր գրվածքի մէջ հոգաբարձութեան դէմ՝ պարոնը հրաժարեցրած է դպրոցի տեսչութենից.... Աւելորդ ենք համարում պատասխանել նրա կատաղի զրպարտանքներին, նրա ողորմելի, ամեն լոգիկայից զուրկ դատողութիւններին։

Նրա նպատակը մեզ նոյնպէս յայտնի է՝ նա մեղադրում է հոգաբարձուներին որ նրանք կիրք և շահասէր նպատակներ ունեն...՝ի հարկէ լաւ է և քաղաքական է շատապել ուրիշի վրա բարձել այն, որ կարող են ուրիշները իրան վերաբերել....

Բայց մենք նպատակ մեզ չենք կարող դնել պարոնի հետ վիճաբանել։

Մենք արհամարհանքով պատասխանում ենք նրան....

Մեր նպատակն է խօսել „Մասիս“ լրագրի վրա։

Պաղուց արդէն մենք մեզ համար համոզմունք էինք կազմած, որ Կ. Պոլսի հայ լրագիրների պէս թերթերը արժանի չեն հրատարակվել այնպիսի երկրում, որտեղ տպագրական խօսքը այդքան ազատութիւն է վայելում, ինչպէս Թիւրքիայում։ Թիւրքիայի հայ ինտելիգենցիան մեծ մասամբ այնպիսի անձներ են, որք հազիւ հազ մի որ և է տարրական ուսումնարանում ուսած են, իսկ իրանց հետևեալ մտաւոր զարգացումը ստացած են Ֆըրանսիական բօմանների ընթերցանութենից։ Դուցէ նրանցից մի քանիսները եղել են Փարիզ...բայց ի՞նչ օգուտ.... Հարկաւոր է որ մի մեքենայ, մի գործիք, օրինակ ջերմաչափը, ուղիղ լինի, որ կարողանանք նրա ցոյց տուածը ուղիղ համարել։ Եթէ ինձ ասեն՝ այսօր կէսօրին 30 աստիճան էր տաքութեան,—ես կը հարցնեմ՝ արդեօք ուղիղ է ձեր ջերմաչափը։ Ի՞նչ օգուտ, երբ կանոնաւոր տարրական և միջնակարգ ուսում չանցած անձն գնայ Եւրոպա, այնտեղ էլ ոչ միջնակարգ, ոչ բարձր ուսում անցնէ,—և յետ դառնայ ամեն բանի վրա իր դատողութիւն տալով, ամեն բան քննելով և մի և նոյն ժամանակ իրան թոյլ տայ արհամարհանքով խօսել նոցա մասին, որք կանոնաւոր կերպով աշխատել են և քրտինքով վաստակել են մի գիտական աստիճան, թէ մի քանի թալէրով կարելի է գնել դիպլոմը Գերմանիայում,—այդ տեսակ խօսողին մենք կը հարցնենք՝ արդեօք քո մտաւոր ջերմաչափը ուղիղ է, որմին վկայում է թէ նա անկարգ դրութեան մէջ չէ, որ կարողանաս ցոյց տալ այս կամ այն երկրի, այս կամ այն հասարակութեան, այս կամ այն երևոյթի ճիշդ աստիճանը, նրա ինչ լինելը....

Շատ և շատ տարի մենք Կ. Պոլսի հայոց լրագիրները կարդում ենք. կարդում էինք, դեռ ուսանող ժամանակ Եւրոպայում,—և միշտ մի հարց էինք առաջարկում մեզ՝ միթէ՞ կարելի է մի լրագիր հրատարակել և երբէք ոչ մի յօդված չը գրել անտեսական մի երևոյթի վրա, իրաւաբանական, կառավարչական, հասարակական մի հարցի վրա, չը տպել երբէք առևտրական յօդվածներ, չը քննել ֆինանսական խնդիրներ, չառաջարկել արհեստական, թատրօնական քննադատութիւններ, նոր գրքերի, գիտական գրվածների մատենագրութիւններ, կամ թէ գիտական թէ առհասարակ նշանաւոր անձերի կեանքի և գործունէութեան նկարագիրներ, նրանց կենսագրութիւններ.... Պարելի՞ է արդեօք լրագիր անուանել այն թերթը, որ ուրիշ լրագիրներից քաղուածք անելով քաղաքական լուրերի, մնացած էջերը լցնում է կրօնական հարցերով, առանց աշխատելու այդ հարցերին էլ մի նոր գարկ տալ, այլ պահպանելով նրանց եղած դրութիւնը, լցնում է էջերը նամակագրութիւններով քիւրդերի հարստահարութեան նկարագրութեամբ, առանց աշխատելու մի սընտեսական կամ հասարակական միջոց առաջարկել այդ երևոյթներին առաջն առնելու, զբաղված է անդադար ծիծաղելի պոլէմիկայով... և այդ բոլորը մի ձևով, մի ոճով, որ իր միամտութեան պատճառով շարժում է զարդացած մարդու ժպիտը.... Կարդացէք Կ. Պոլսի հայ լրագիրները՝ ամեն հարց, ամեն խնդիր, վճռվում է երեխայական դատողութիւններով, նախադասութիւններով առանց որ և է խորհրդի, այն, ինչ որ անուանում են ֆրազներով....

Արանք էին մեր լրագրութեան կատարելագործվելու երկար ժամանակ, սրանցից էր օրինակ առնում և մեր Թիֆլիսի հանգուցեալ „Մեղու Հայաստանի“ լրագիրը։ Նոր „Մեղուն“ փոքր ինչ առաջ է գնացել, բայց այնքան չէ առաջացել որ մեր Կ. Պոլսի թերթերը ու նա միմեանց չը նմանէին, միմեանց չը համարէին....

„Մասիսի“ խմբագրութիւնը տպելով „Մեղուի“ խմբագրի հայհոյական, զրպարտիչ յօդվածը, ինքն էլ իրանից աւելացնում է զանազան ծանօթութիւններ, կուրօրէն հաւատալով Պետրոս Սիմէօնեանցին։

Ճշմարիտ խօսողանած՝ մենք եթէ էլ մեծ կարծիք չունէինք Կ. Պոլսի հայ լրագրութեան մասին, բայց այդ տեսակ վարմունք չէինք սպասում „Մասիսից“։ Ամեն լրագրի խմբագրութիւնը իրաւունք ունի տպել մի որ և է յօդված, բայց այդ նրան իրաւունք չէ տալիս իր համերաշխութիւնը ցոյց տալ հաղորդածի հետ, հաւատալ կուրօրէն մի կողմի վկայութեանը, դատապարտել միւս կողմը, առանց այդ վերջինի խօսքը լսելու։ Պարելի՞ է արդեօք վիրաւորական ծանօթութիւններ անել խմբագրութեան կողմից այն հասարակութեան կեանքի, անձների, երևոյթների վրա, որք իրան բոլորովին անծանօթ են։ „Մասիսի“ խմբագրութիւնը կարող էր այո՛, տպել պ. Սիմէօնեանցի յօդվածը, բայց նրա պարտաւորութիւնը կը լինէր զսպել իրան որ և է սեփական ծանօթութիւններից, իսկ ճշմարիտ և օրէական խմբագրութիւնը աւելի էլ կանէր՝ նա իր համար պարտաւորութիւն կը համարէր հետևեալ ծանօթութիւնն անել՝ „մենք տպելով այս յօդվածը, թողնում ենք պատասխանատուութիւնը հեղինակի վրա և կովկասեան հայերի դրութեան անծանօթ լինելով, կը խնդրենք միւս կողմը հաղորդել մեզ իր միտքը, յայտնել իր կարծիքը։ Մենք իրաւունք չենք համարում մեզ դատապարտել Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը այդ անարդ խօսքերով, մինչ որ ինքներս ծանօթ չենք նրա գործունէութեանը։“

Ահա ինչ պիտի անէր մի լրագիր որ կամենում է իր յարգը չը կորցնել մտածող անձերի աչքումը....

Աւելի էլ աններելի է մի լրագրին դատել իրան անծանօթ հասարակութեան երևոյթների վրա, երբ նրա գործունէութենից երևում է, որ իր սեփական շրջանի, իր սեփական երկրի ու հասարակութեան դրութեան շատ և շատ կողմեր նրան չեն զբաղեցնում... երբ նրա գործունէութենից, նրա յօդվածներից պարզ երևում է թէ հարցերի տեսական կողմի, թէ նոցա գործնականապէս լուծելու թուլութիւնը....

Եթէ մենք, ռուսահարնակ հայերս, որ և է, ամենամութ տեղեկութիւն անգամ ունենք թէ Թիւրքիայի, թէ այնտեղի ազգայինների դրութեան վրա,—դժուար թէ այդ տեղեկութիւնները քաղած լինէինք Կ. Պոլսի հայոց լրագիրներից։

Մենք դարձեալ այնքան պատում ենք „Մասիս“ լրագիրը, որ յոյս ունենք թէ նա կուղղէ իր սխալը։ „Մասիսը“ ստանում էր և կարդում էր թէ „Մշակը“ թէ „Մեղուն“,—ինչի ուրեմն մէկի գրվածներին չէր հաւատում, իսկ միւսին կուրօրէն հաւատում է....

Պ. երջացնում ենք մեր խօսքը ասելով, թէ ցաւալի է, երբ „Մասիսի“ պէս անկախ հայոց լրագիրը, որ կարող էր դատաւոր լինել մեր մէջ յարուցած շատ հարցերի մէջ *),—հրաժարվում է այդ նախանձելի պաշտօնից, կողմնապահ կերպով հակվելով դէպի մի կողմ....

*) Մենք չենք էլ խօսում „Մասիսի“ այն դատողութիւնների մասին, որք ընդդէմ են առողջ, օգտաւէտ և ամեն տեղ ընդունված ձևերին և սովորութիւններին։ Բաւական չէ որ „Մասիս“ կուրօրէն հաւատում է Սիմէօնեանցի բամբասանքներին, նա ցոյց է տալիս իր տգիտութիւնը, դատապարտելով իր խմբագրական ծանօթութեան մէջ այնպիսի երևոյթ, ինչպէս ընդհանուր մի ժողովից առաջ անդամների առանձին խմբերով հաւաքվելու սովորութիւնը, այն ինչ ամեն երկրում ճանաչված է այդ միջոցի անհրաժեշտութիւնը։ Ամենալաւ ապացոյցը որքան անհրաժեշտ է հաւաքվել ժողովից առաջ, մասնաւոր խմբերում խորհրդակցել և վճռել այն հարցը որ պիտի ներկայանայ ընդհանուր ժողովին, այն է, որ այդ երևոյթը խօսքով դատապարտողները իրանքն էլ նոյն են անում, հաւաքվելով իրանց կուսակիցների հետ...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

„Արարատ“ ամսագրի մարտ ամսեան տետրակի մէջ „Մշակի“ ընդդէմ յօդուածը զարթեցրեց իմ մէջ հազար ու մէկ տխուր մտածմունքներ....Պար ժամանակ, որ ողորմելի հայն ամեն մի տպած տառերն և տողերն համարում էր ճշմարտութիւն, բայց այժմ վերջին գիւղացին շատ և շատ անգամ չէ հաւատում տպած գրքերին։ Այսպիսի ճշմարտութեանը մինչև այժմ չը կարողացաւ հասնել „Արարատի“ խմբագրութիւնը։ Ամենապլանդակ մտքերին հագցնելով շատ անշնորհ կերպիւ կազմած գրաբար վերարկու, տգիտում է ինքն էլ չը գիտէ ո՞ւմ համար....

Այդ ամսագիրն մինչև այժմ չէ որոշել իւր նպատակն, թէ ումն է ծառայում։ Եթէ մտածում է ժողովրդին, շատ սխալվում է՝ նա բոլորովին չէ ճանաչում այն հօտը, որին իբր թէ ծառայում է։

Իսկ եթէ հոգևորականութեանը՝ այդ առաւել ևս միամտութիւն է խմբագրութեան կողմից, որովհետև մեր հոգևորականներն, ըստ մեծի մասին, ոչինչ չեն կարողանում կարդալ, կամ տգիտութեան պատճառաւ, կամ օրական հացի հետևից վազ տալով, պատերազմում են հանգամանքների հետ իրանց անմխիթար գոյութիւնը պահպանելու համար։ Քանի և քանի քահանայների հագեմաշ և անվերջ պատմութիւնը ես լսել եմ, թէ ինչպէս ծանր և անտանելի է նոցա համար վճարել այն չընչին վարձը, որ նշանակած է „Արարատը“ ստանալու համար։ Նաև գիտեմ քանի մի օրինակներ որ գործակատարներն տարիներով արգելք դնելով ողորմելի քահանայի արդիւնքին, չեն կարողանում կազմել այն գումարը, որ պէտք է վճարվի „Արարատի“ համար.

Այդ վարձը „Արարատը“ առնում է թէ ժողովուրդից, թէ քահանայներից և թէ իսկ եկեղեցուց, մանաւանդ այն եկեղեցիներից, որոնք շատ քիչ են զանազանվում այն ողորմելի գեանի միջին թաղուած տներից, որոց մէջ կենում է միշտ աշխատող և միշտ քաղցած հայ գիւղացին։

Որտեղից երևում է, որ „Արարատը“ միայն ծառայում է իւրան։

„Արարատը“, իբրև մի գործիք մեր հոգևորականաց, արդեօք մի ընչին օգուտ բերից իւր գոյութեամբ։ Արդեօք նա մամ հայ հասարակութեան կարիքների մէջ, արդեօք նա բարձրացրեց մի ազգօգուտ հարց և ըստ կարեաց չափ վճռեց։ Արդեօք նա գցեց սէր հայոց գոնէ մի մասի մէջ դէպի ընթերցանութիւնը....

„Արարատի“ մի թոյլ կողմն էլ այն է, որ հոգևորական կարգին վերաբերելով մի առանձին կոչումն՝ տանելու ազգը դէպի լուսաւորութիւն և երջանկութիւն, ընդդէմ խօսելիս իսկոյն առաջ է բերում մեր սուրբ և երջանկայիշատակ Սահակին, Մեսրոպին, և այլն։ Մինթէ այդ ամսագիրն մինչև այժմ չմացաւ, որ մենք էլ նրանց ենք ուզում, նրանց ենք պատում, ո՞ւր են, տուէք մեզ.... Այսոց պատասխանութիւնից, եթէ յայտնի է „Արարատին“, մենք տեսնում ենք ինչ զօհիր և ինչ տանջանք կրեց ժողովուրդը, որ պահէ սուրբ հայրերից աւանդած եկեղեցին։ Այն համար շատ թանդ է նստել իւր կրօնը, որ այդպէս հեշտ ծախէ, ինչպէս կարծում է „Արարատը“, բայց, թէ հայն և բացի „Մշակի“ խօսքերից անբաւական է իւր ծառայների, իւր վարձկանների մեծ մասից,—այդ էս յայտնի է ամենքին։

„Արարատի“ մշտական երևակայութիւնը այն է, որ նա հոգևորականների վերա ամեն խօսողներին համարում է անհարազատ դէպի եկեղեցին։ Ես գիտեմ որ ինձ էս կը համարէ։ Բայց ինչ փոյթ.... Այդով չափ սիրելով մեր

կրօնը և ազգը, մենք պահանջում ենք և կը պահանջենք նոցա նման հոգևորականներ, որոնց 'ի զուր կը պտռէինք արդեան հոգևորականների թեում և որոնցով ինքն „Արարատն“ է պարծենում....

Կրօնասէր հայն խմբերով թողնում է իւր սիրելի եկեղեցու գաւիթը և փախչում դէպի ուրիշների եկեղեցին.... „Արարատ“ հարցրիր արդեօք քեզ, թէ ինչ է պատճառը.... Ամեն տեղից լսվում է, որ այս կամ այն գերդաստանը շաղկապվում է այս կամ այն օտար ազգի հետ և կորցնում է իւր ազգութիւնը.... „Արարատ“ հարցրիր արդեօք քեզ ի՞նչ է պատճառը....

Այս կամ այն գիւղերում և քաղաքներում եկեղեցիները կողպված, հայ ժողովուրդը ամիներով չէ տեսնում տաճարի դուռը. իւրեանց քահանայի հետ հանդիպում են միայն խնձոյքներում. այդ քահանան չը գիտէ իր կրօնքի լեզուն որի քարոզիչն է.... „Արարատ“ հարցրիր արդեօք քեզ, ի՞նչ է պատճառը....

Այն մեր կաթոլիկ եղբայց երկպառակութիւնից ի՞նչ օգուտ քաղցիր: Արդեօք հոգս քաշեցիր կանչել նորանց իւրանց հայրական եկեղեցու ծոցը....

Այժմ խմբերով կաթոլիկների հոգևորականներն թափվում են Թիւրքիայ՝ արդեօք մտածում ես, հոգս ես քաշում նորանց առաջն առնուլ....

Այժմ ուսուցչական և ուսումնարանների հարցը, իբրև առաջին խնդիր, հարկադրում է արդեօք քեզ „Արարատ“ մտածել ուսուցիչներ պատրաստելու մասին:

Ո՞ւ գոյութիւնից մինչև այժմ արդեօք տուիր մի հաշիւ քո թերթերի մէջ ստացածներիդ և արածներիդ մասին....

Եթէ դու քեզ համար մի բարի նպատակ ես դրել, աշխատիր նախ և առաջ խղճմտանքով կատարել պարտաւորութիւնդ, ծառայել քո կոչմանը,—իսկ մնացածի մասին ինքն հայն է հոգում.... Գիտացիր որ ամեն մի հայ 'ի բնէ հաւատարիմ է իւր Ազգին և Եկեղեցուն:

Բժշկապետ Գ. Քուչարեանց

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Կարդացուեցաւ պ. Մարգար Մարգարեանի յօդուածը «Արարատում»: Ցառաջ քան թէ կակնարկէի պարոնի զուտ ճշմարտութիւնները, հարկաւոր էր ինձ ծանօթանալ նորա հետ. և որովհետև այդ անունը կեղծեալ չերևաց ինձ, ինչպէս են Քարտաշ, Մաժակ, Քիչիկեան և այլն, աշխատեցի որոնել, բայց, ներեցէք ինձ ասել, որ ամբողջ Գանձակում չկայ այդ անունը...

Ցօդուածագրի առաջ բերած փոփոխամտութիւնը պ. Տէր Ներսիսեանի մասին, որը ընդվայր նախատասութիւններով աշխատում է ապայցուցանել, բոլորովին անտեղի է.... Եթէ պ. Մարգարը լաւ չէ ճանաչում նորան, մենք հաւատում ենք այդ բանին, և աւելացնում ենք՝ եթէ պ. Տէր Ներսիսեանը մերժել է իրանից դէբուղաթի պաշտօնը, այդ ցոյց է տալիս նորա հեռատեսութիւնը: Նա ինքն քաջածանօթ լինելով Գանձակու հասարակութեանը, հաւատիացած էր որ շատ իւր նմաններին է պատժել դա ակամայ և անիրաւացի մեղադրանքներով և մինչև անգամ զգալի հարուածներով, ուստի ափսոսալի էր եթէ մենք պ. Տէր Ներսիսեանին պարտաւորած գտնէինք մի այդպիսի աննախանձելի պաշտօնի ներքոյ: Իսկ ինչ վերաբերում է յօդուածագրի այն խօսքին, որ ակնարկելով նոյն պարոնի հոգաբարձական պաշտօն չընդունելը, մենք կասենք որ հարուածներին անզգայ գտնվող մի անձն միայն կարող է այս հանդամանքներում զպրոցի հոգաբարձական պաշտօն տանել և անկարեկից գտնուել նորա ցաւալի դրութեանը, ինչպէս վարվում են Նորա ներկայ անդամներ պ. պ...ի՞ները, որոնց հետ Տէր Ներսիսեանը իւր ձայնի նուազութեամբ միայն անօգուտ անդամ կարող էր համարուել: Այլ է չհասկանալ, այլ է հասկանալ և գործադրել չկարողանալով՝ խղճահարուել....

Գալով պ. Տէր Ներսիսեանի երեցփոխանական պաշտօնից հրաժարուելուն, մեզ այլ ևս ապացոյցներ պէտք չեն: Այդ մասին ես կխնդրէի ընթերցողին ի նկատի ունենալ, ոչ թէ 34 համարը «Մշակի», ինչպէս պնդում է պ. Մարգարը, այլ 38 համարի մեր նամակը, միայն այն զանազանութեամբ, որ փոխանակ 50 մանէթի, երևի արպագրական սխալմամբ մնացած էր 5 մանէթ չտեմարանի բաժինը...որի պատճառով պ. յօդուածագիրը իւր անտեղի մարգարէութեամբ կցորդում է թէ ինչն «մաղաչափ սուտ չէ ասում, եթէ սուտ է, թող դէմը գրեն, այն ժամանակ խօսքը յետ կառնի»:

Եթէ նորան այսօր ստիպումեն նորից ակնարկել «Մշակի» Գանձակու նամակները պարունակող համարները, ուր, ի թիւս այլ հրաչքների, կը գտնի նաև չտեմարանին վերաբերեալ նուիրաբերութեան յափշտակութիւնը. կամ թէ պ. պ. Փաթալեանը և Տէր Ներսիսեանը հանդէս գալով կը հրապարակեն այդ անցքը, այն ժամանակ պ. Մարգարը կկրկնի, «ներեցէք պարոններ, ես չէի հասկանում, այժմ յետ եմ առնում խօսքս»: Սա ամօթ չէ...

Եթէ պ. Մարգարեանը մխիթարուել է Ս. Հ. քարոզներից—ինչպէս և մեր առաջ բերած մի անիծալից ատենաբանութիւնից, այդ մենք բոլորով սրտիւ ներում ենք պարոնին և գուցէ շուտով կը մեկնուի թէ ինչումն էր կայանում դորա և նմանների մխիթարութիւնը. բայց իբրև ապացոյց, որ պարոնը ի զուր է աշխատում վարագուրել քարոզի թերութիւնքը, մէջ կբերենք մեր քանի մի պատկառելի ծերունիների խօսքը, որոնքը կարդալով «Մշակի» համարներում Նորա նզովալից քարոզի մի քանի տողերը, ասել էին իրան. «Հայր սուրբ, կարծես թէ դու քարոզելիս կշտիդ կանդնած մին մին գրած լինի. աղաթը խէրը ասայ մին կէտ էլա փոխելայ...»

Արդարև Գ. Հ...ը մի ամբողջ տարի իւր նըպատակին ծառայելու համար աշխատում էր գոհացուցիչ երևել իւր պաշտօնի մէջ. Հենց այդ իդէային էլ ծառայելով մի ամբողջ տարուայ ընթացքում աշխատում էր գործունէութեան յոյսեր խոստանալ, որով և հաղիւ կարողացաւ պ. Մարգարեանի նման հզօր պաշտպաններ ունենալ: Խնդրենք պարոնին ցոյց տալ մեզ մխիթարական գործերից գոնէ մինը. արդեօք ինչ կպատասխանի: Այն, որ չտեմարանը բացի իւր կիսաւարդ դրութեամբ մնալը, այժմ արտաքնոցի պաշտօն է լցուցանում դպրոցին, թէ այն որ Հոգևոր դպրոցը ողորմութեան տուն է դարձել քանի մի պարոնների համար:

Անցեալ ամսի 4-ին քաղաքիս հասկացող դասից կազմուեցաւ մի բողոք (բացի քանի կողմնակի անձներից առանձնապէս մատուցածը) յանուն նորին Վեհափառութեան, Ս. Հ. անկանոն ընթացքի նկատմամբ. ուր խնդրում էին արձակել նորան և տալ իւրեանց մի այլ ոք, որ իւր ընթացքով համապատասխանէր ժողովրդի պահանջներին: Լուր հասնելով այդ մասին Ս. Հ...իսկոյն աշխատում է մի այլ ստորագրութեան թերթ կազմել իբրև չնորհակալութիւն որին ստորագրում են քաղաքումս եղած բոլոր սայլապաններ, միկիտաններ, անզրագէտ և մինչև անգամ անչափահաս մարդիկ, չնորհիւ մի քանի ականաւոր անձանց... Այդ ականաւոր անձներից իւրաքանչիւրը, որոնց կարող էի անուն անուն յիշել, ունէր իւր նիւթական շահերը յիշեալ թուղթը ստորագրելու համար. մինը իւր համար էր աշխատում, միւսը որդու համար, երրորդը մի ազգականի համար, և այլն....

Ահա սոքա և սոցա նմանները ստիպուած այսպիսի խոշոր հանդամանքներից, կարող էին մթթէ չաշխատել, թէև սրտանց ևս չհամակրէին...

Ցոյս ունիմ որ, թէ պ. Մարգարեանը և թէ նոր յօդուածագիրը «Մեղուի», չեն ուրանալ այն իրողութիւնները, ինչ որ պատահումէին թերթը ստորագրել տալու ժամանակ:—Ես գրել չգիտեմ, ասումէր մինը:—Ես չեմ ճանաչում, երեսն էլ չեմ տեսել, ասումէր մի այլ:—Ատա դէհ որ մեր ծերը տնիլին էլ կրօսող կայ կեբրենք էլի, եանի մնց անենք թէ ճնանչում չենք—զուարճանում էր մի երրորդը:

Չեն ուրանալ և այն որ շատերի անզրագէտ լինելու պատճառով, նոցա փոխանակ ստորագրում էին ուրիշները....

Հէ, պ. Մարգարեան, ինչպէս ՁՔ գտնում ձեր ստութեան աստիճանը, կարծեմ մաղաչափ է, այնպէս չէ՞...խնդրեմ յետ մի առնէք դեռ՝ դա կարող է մեծանալ...գերան դառնալ...այնուհետև ինձ նման չնչին արարածները անկարող կլինեն կոտրել նորան և դուք լիակատար յաղթող կը հանդիսանաք...:

1874 թ. Ապրիլ Մաժակ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

3 Ապրիլի. 74.

Այս կողմի հայերը թէ գիւղացի և թէ քաղաքացի ընդհանրապէս մեծ սէր ունին ստորագրել որ և իցէ թուղթ, առանց իմանալոյ բովանդակութիւնը և ինչ նպատակի արդեօք պիտոյ է ծառայէ այն:

Տեղացւոց այս բնաւորութիւնը հասկանալով, նաև գիտնալով թէ և հոգևոր իշխանութիւնը նոյնպէս հասու չլինիր թէ որո՞նք են եղած խնդրի ստորագրողք կամ թէ կայ հարկաւորութիւն նոյն խընդիրը կատարելոյ,—բաղդախնդիր մարդիկ ի չարն գործածելով ժողովրդեան պարզամտութիւնը, քանի մի մանէթ տալիս են մի դրչի, որ յօրինում է նոցա համար մահնարագիր, և ստորագրել տալով ժողովրդոց ուղարկում են իշխանութեան և մէկ ալ տեսնես հասաւ հրաման թէ այս ինչ անձնը այս արժանաւորութեանց համար և ի կատարումն բազմաստորագիր աղերսագրոյ ժողովրդեան արժանի համարեցաւ աստիճանի քահանայութեան:

Ահա այս եղանակաւ, որ և իցէ մարդ, որ ոչ մի տեղ ուսումն առած չէ, իւր կեանքում ոչ մի գործունէութեան ասպարէզի մէջ պիտանացու և յարմար եղած չէ, ոչ մի գործում ապրուստ գտած չէ, ապրուստ գտանելու համար միայն դառնում է հովիւ բանաւոր հօտին Քրիստոսի և աւանդապահ վարդապետութեան նորին:

Օրինակի համար մի որ և է ուսուցիչ կամ մի տիրացու, սակաւաքանակ համարելով իւր ստացած տարեկան եկամուտը, ցանկանում է քահանայ դառնալ որպէս զի աւելի ապահով կեցութիւն ստանայ: Շինում են խնդիր յանուն հոգևոր իշխանութեան, որպէս թէ ինքանք ամենայն կատարելութեանց տէր են և ժողովուրդք նեղվում են քահանայից սակաւութենէն (մինչդեռ 20-էն աւելի քահանայք են քաղաքումս և 10 ի նոցանէ աւելորդ բոլորովին և միայն ի ծանրութիւն ժողովրդեան) և ստորագրել տալով պարզամիտ ժողովրդոց ոմանց, ուղարկում են Սինոդ: Մի քանի ժամանակ անցանելուց զկնի, չնայելով որ ծխական ժողովուրդք այն եկեղեցիներին, որոց վերա խնդրվում են նոքա քահանայանալ, բազմութեամբ ձայնից բողոքում են թէ չկամին նոցա քահանայանալը իւրեանց վերա, ստացվումէ հրաման թէ ի կատարումն բազմաստորագիր աղերսագրոյ ժողովրդոց այս ինչ անուն եկեղեցւոյ այս ինչ վարժապետն կամ տիրացուն ձեռնադրել քահանայ:

Սոցա ձեռնադրութեան հրամանը գալուց զկնի ինչ անէին ժողովուրդք: Քահանայացուք ձեռնադրվումեն սարկաւագ և շուտով պիտոյ է ձեռնադրվէին քահանայ:

Կայծակի նման տարածվում է այս լուրը ժողովրդեան մէջ և նոքա ստիպվում են դիմել խընդիրքով հայր յաջորդին, որին հրամայած էր կատարել ձեռնադրութիւնը, որ դադարի ձեռնադրելը և եղելութիւնը յայտնէ Վեհափառ Կաթուղիկոսին: Իսկ հասարակ ժողովուրդք այն աստիճանի դայթակղած են, որ մտադիր են եթէ չը յետաձգվի ձեռնադրութիւնը, պօռալ եկեղեցւոյ մէջ թէ անարժան են:

Այժմ, որպէս լսեմ, ծխական ժողովուրդք չկամենալով ամենևին ունել հովիւք, որոնց ինքանք ընտրած չեն, մտադիր են դիմել հոգևոր իշխանութեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նորին Կայսերական Բարձրութիւն, Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ նշանված է Մարիամ Մէկլէնբուրգ-Շվերինի Մեծ Իշխանուհու հետ: Լրագիրները հաղորդումեն, որ Մեծ Իշխանուհին կը պահէ իր դաւանութիւնը, այսինքն կը մնայ բողոքական կրօնքի մէջ և չի ընդունի ուղղափառութիւնը, ինչպէս մինչև այժմ էր լինում: Միայն երեխաները կը լինեն ուղղափառ կրօնքի:

***

Նորին Բարձրութիւն, Կովկասեան փոխարքան, թողից Թիֆլիս և իր ընտանիքով տեղափոխվեցաւ Բօրժօմ ամառանոցը:

***

Խմբագրութիւնս ստացաւ մի գրքոյկ հետևեալ վերնագրով „Отчетъ по управленію Кавказскими минеральными водами.“—Այդ մի հաշիւ է Կովկասեան հանքային ջրերի վարչութեան կողմից: Ինչպէս երևում է այդ հաշվից, ջրերի այժմեան կառավարիչ պ. Բայկովը, բաւական աշխատումէ յարմարացնել Պիատիգօրսկի մէջ այցելուների բընակվելը, աշխատում է ամեն յարմարութիւններ ներկայացնել հիւանդներին, թէ բնակվելու թէ ուտելու կողմից:

***

Ալէքսանդրապօլից գրումեն մեզ, որ ներկայ թուի յունիս ամսի սկզբներից լինելու են հայոց հոգևոր դպրոցի հարցաքննութիւնները:

***

Ալէքսանդրապօլից հաղորդումեն մեզ մի շատ հետաքրքիր լուր, իբր թէ հայ ուսումնասէր անձանց մի խումբ դիտաւորութիւն ունի մի հայերէն ամսագիր կամ շաբաթագիր հրատարակել:—Ցանկանումենք աջողութիւն այդ օգտաւէտ գործին:

***

Նոյն տեղից գրում են մեզ մայիսի 14-ից, որ ցուրտ եղանակները դեռ շարունակվում են: Խոտերը հազիւ են բուսնում, հազիւ կարելի է ծաղիկներ տեսնել դաշտերում:

***

„Астраханскій Справочный Листокъ“ լրագիրը գրումէ թէ այլազգի ազգաբնակութիւնը Աստրախանի նահանգի հաւաքում է այժմ դրամական միջոցներ, որ ուղարկի մի պատգամաւորութիւն Ս. Պետերբուրգ, ճիշդ տեղեկանալու համար արդեօք ենթարկվելումեն այլազգիները ընդհանուր զինուորագրութեան յունվարի 1-ի, 1874 թ. հրատարակված կանոնադրութեանը: Լրագիրը ասում է, որ ապրիլի 13-ին նահանգապետի նախագահութեամբ ժողով կայացաւ զինուորական պարտաւորութեան նահանգում գործադրութեան մասին, որտեղ քննվեցաւ և Աստրախանաբնակ հայերի խնդիրքը, թէ հայոց հասարակութիւնը, ունելով առանձին արտօնութիւններ, ենթարկվելու է արդեօք նոր զինուորագրական կանոնադրութեանը: Խորհուրդը աչքի առջև ունելով, որ Կայսերութեան այլազգի բնակիչներ անուանվումեն միայն նրանք, որք յիշված են օրէնքների IX-որդ հատորի մէջ, իսկ հայոց հասարակութիւնը նոյն այլազգի ժողովրդների թըւում յիշված չէ,—վճռեց առանց հետևանքի թողնել հայերի խնդիրքը:

***

Գանձակից գրումեն մեզ մայիսի 13-ից, որ այդտեղ երաշտութիւն է, անձրև չէ գալիս: Հացը և ուտելեղէնները օրէցօր սաստիկ թանգանումեն:

***

Մենք լսումենք, որ պ. Պալասանեանի նոր աշխատանքը՝ «Քերականութիւն մայրենի լեզուի» շուտով լոյս տեսնելու է: Պարոն Պալասանեանը արդէն ծանօթ լինելով մեզ, որպէս խղճմտաբար աշխատող մեր լեզուի, պարտաւորութիւն ենք համարում ասել, որ ի սրտէ բարևումենք հեղինակի գրականական աշխատութեան այդ նոր ծնունդը:

***

Ստացանք և միւս համարում կը տպենք պ. Զայրմայր Մսերեանցից Մօսկվայում հրատարակվող «Փարոս» բանասիրական ժողովածուի երրորդ տետրի յայտարարութիւնը:

***

Ընթերցողը երևի յիշում է «Մշակի» անցեալ համարի Ներքին տեսութեան մէջ տպված յօդվածը Ներսիսեան դպրոցի կապալների գործի մասին:—Այժմ մենք լսում ենք, որ հին կապալառուները այն զիջումն էլ արին դպրոցի հոգաբարձութեան նախագահին, որ յանձն առան մըրցութեան ժամանակ առաջարկված նոր պայմանը: Կապալը մնաց հին կապալառուներին:

***

Մեզ հաղորդումեն որ Աստրախանի վիճակաւոր առաջնորդ Գեորգ արքեպիսկոպոս Վեհապետեանը մի երիտասարդի, որ Ցիւրիխում մանկավարժութեամբ է պարապում, առաջարկել է իր հաշվով շարունակել ուսումը մինչև վերջը և յետոյ ըստ իր որոշման ծառայել մեր ազգային ուսումնարաններից մինի մէջ:—Ահա մի բարձր հոգևորական որ ազատ է այն նախապաշարմունքից թէ գերմանական ուսումը վնասակար է...բայց ասում են՝ մի ծաղիկ գարունք չի բերի....

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Մեզ գրումեն Պարսկաստանից, որ Ատրպատականի նահանգում հացը մի ամսվայ մէջ իր արժէքից կրկնապատիկ թանգացաւ: Ժողովուրդը սարսափելի տագնապի մէջ է. նա երկիւղ ունի սովից: Հացի թանգանալու պատ-

ձառը վերաբերում են այն դեպքին, որ անցեալ ձմեռուայ սաստկութիւնը մինչև գարնան ամիսները թողել էր խիստ թանձր ձիւն դաշտերի վրա, և գետինը տաքանալով, ցանքերը փտել են։—Լուր կայ, թէ Նորին մեծ. Շահի ժառանգը (Վալիահթը) նպատակ ունի ճանապարհորդել Ներպատականի գաւառները, ժողովրդի վիճակը հետազօտելու համար։ Նորին Բարձրութիւնը գլխաւորապէս ուշադրութիւն պիտի դարձնէ գիւղացիների դրութեան վրա։ Նա պիտի կարգադրէ հարկապահանջութեան մի նոր սահմանադրութիւն, որպէս զի, թէ կալուածատէրերը, թէ նոյն իսկ կառավարութիւնը իրաւունք չունենան ամեն մի գիւղից նշանակվածէն աւելի հարկ պահանջել։ Որոյ ընդհակառակն մինչև այսօր գիւղերն ենթարկուած են եղել կալուածատէրերի կամայականութեանը։

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

Ապրիլ. 1874.

Եթէ ընթերցողը յիշում է, իմ անցեալ նամակներից մինի մէջ, պատմելով Էլզասի ընտրութիւնները, ես աշխատեցի ցոյց տալ թէ որքան վնասակար է Էլզասի համար քաղաքական և կրօնական հարցերի խառնելը։ Ամենքը առաջուց զգում էին, որ այդ կղերական պատգամաւորները չեն կարող կատարել իրանց յանձնած պաշտօնը։ Նախագուշակութիւնները իրագործվեցան։

Մեր նպատակը չէ մանրամասն լուծել այն հարցը, թէ որքան հմուտ են հոգևորականները մի որ և է ազգի առաջնորդութեան։ Այս հարցը մեր թերթակցութեան սահմաններից դուրսն է։ Մի քանի խօսքերով միայն պարզենք մեր միտքը։

Էլզասցիք, մի փոքր ժողովուրդ, ենթարկվում են Գերմանիայի պէս մեծ տէրութեան ճնշողութեանը։ Փոքր ժողովուրդը ցանկանում է իր անկախութիւնը պահպանել. մեծը ընդհակառակն, ուզում է նրան իր հետ միացնել։ Այս կռիւը քաղաքական և աշխարհական լինելով, կարծեմ պարզ է, որ կուռող ժողովրդների առաջնորդներն էլ աշխարհականներ պիտի լինեն, և ոչ թէ հոգևորականներ, որք, եթէ ասդասէր էլ լինեն, այնու ամենայնիւ իրանց սահմանափակ, կղերական շահերը ունեն։ Եւ ազգային գործը նրանց աչքում առաջին տեղն էլ չէ բռնում, երբ հակառակում է կղերական օգուտներին...

Վերառնենք, օրինակի համար, կաթոլիկ կղերը։ Ինչ է ուզում նա,—կաթոլիկ եկեղեցու ամենակարողութիւնը։ Փոյթ չէ այդ հոգևորականներին իրանց համազգայինների ճնշուած, բռնադատուած լինելը մի օտար ազգի ձեռքով,—միայն որ իրանք ամենակարող լինեն և առաջնակարգ դերը խաղան... Այս ճշմարտութիւնը դարձեալ մի անգամ հաստատվեցաւ Էլզասում։ Այդ երկրի հոգևորականները լաւ հասկացան, թէ քանի որ Էլզասը Գերմանիային կը պատկանէ, Էլզասցիք Գերմանիայի ՉԳՐՈՒ, գերմանական կառավարութենից հալածված կղերին առաւել կը պաշտեն և աւելի մեծ նշանակութիւն կը տան։ Հասկանալով այս, նրանցից մինը, Ստրազբուրգի եպիսկոպոսը, պ. Բէյսը, ուրանալով իր ընտրողների յանձնարարութիւնը, և միայն իր դասի շահերը աչքի առաջն ունենալով, ասաւ Բայխստագում (գերմ. Ազգ. ժողով), որ ինքն համաձայնվում է Էլզասի Գերմանիայի հետ միաւորութեանը։ Պ. Բէյսի ասած խօսքերը շատ մեծ աղմուկ բարձրացրին Էլզասում։ Ընտրողները պահանջում են եպիսկոպոսից, որ նա իր պատգամաւորական պաշտօնից հրաժարվի։ «Մենք սիալվեցանք ձեզ ընտրելով, էլ չենք ուզում ձեզ», գրում են բազմաթիւ նամակների մէջ էլզասցիքը։ Մինչև անգամ փոքր հոգևորականները հեռանում են եպիսկոպոսից։

Այժմ տեսնենք ինչ են մտածում նոյն Էլզասի մասին Գերմանիայում։ Դառնանք դէպի կառավարութիւնը։

Ազգային ժողովի առաջին նստերից մինի մէջ մարշալ Մոլտկէն, խօսելով զօրքի վրա, ասեց թէ Գերմանիային հարկաւոր է մեծ և զօրեղ զօրք Էլզաս-Լոթարինգիա պահպանելու համար։ Եւ ահա ինչ է ասում Մոլտկէի ճառի մասին Վիէննայի „Fremdenblatt“ լրագիրը՝

Գերմանիան հրաժարվում է Էլզաս-Լոթարինգիա բարոյապէս նուաճելուց, իսկ կամենում է պահպանել այդ երկիրը զէնքի զօրութեամբ։ Մինթ Աւստրիան էլ քաջապէս չէր պաշտպանում Լոմբարդիա և Վենետիա։ Բայց չը նայելով մեր յաղթութիւններին իտալական զօրքերի դէմ, վերջապէս մենք ստիպվեցանք հրաժարվել այդ երկրներից, որովհետև մեզ անկարելի էր մեր զէնքի յաղթութիւնները բարոյական յաղթութենով լրացնել։ Եթէ որ և է տէրութիւն մի երկիր պահպանելու համար պէտք է ամեն մի բոպէին զէնքը պատրաստ ունենայ, շատ հաւանական է, որ վաղ թէ ուշ նա ստիպված կը լինի հրաժարվել այն երկրից։

—

Փարիզում լոյս տեսած Վիկտոր Հիւգօի նոր բոմանը «Ինսուն և երրորդ թուականը», նկարագրելով Ֆրանսիայի մեծ յեղափոխութեան անցքերը, առիթ է տալիս հեղինակին ընդհանուր մարդկային հարցերը վճռելու։ Մենք մեր պարտաւորութիւնը կը համարենք տալ հայ հասարակութեանը, եթէ ոչ ամբողջ թարգմանութիւնը, գոնէ նրանից մի քանի հատուածներ։

Պ. Իզմ.

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Այս օրերս քաղաքիս խոհուն գլուխները զբաղուած են մի նոր հարցով, այն է քաղաքական ամուսնութիւնը։ Մեծազելի բան, մի ազգ, որ չունի քաղաքական կեանք, մտածում է քաղաքական ամուսնութեան վերա։ Ինչ ատեանում պէտք է կատարուի այդ նոր ամուսնական դաշնադրութիւնը։ Ի հարկէ պետական ազգի ատեանում։—Այդ խիստ դիւրին միջոց կը լինի մի հայ աղջկան բռնել Թուրքի, Յոյնի, Հրէայի, և ինչ ազգից որ ուզենայ մի տղամարդի ձեռքը, և մտնել ուղղակի մահնեատկանի մահքեման։ Մինչդեռ հոգևոր կառավարութիւնը, իւր ձեռքում ունելով ամուսնութիւնը որպէս եկեղեցւոյ խորհուրդ, գոնեա արգելք էր դնում այդպիսի դէպքերին։ Ապա Սահմանադրութիւնը, կը հարցնեն մնդանից։ Մինթ կայ երաշխաւորութիւն դորա հարատևութեան մասին, հարցնում ենք մենք։

Պօլսեցոց յատկանիշն է՝ ամեն բան փոխանակ դլխից սկսելու, պօչից սկսել։ Պօլսեցին չը գիտէ հեռևաբար յառաջադիմել կեանքի մէջ։ Նա սիրում է թռիչքներ գործել։ Իսկ այդ վտանգաւոր է նորանով, որ խիստ յաճախ պատճառում է սարսափելի անկումներ։

Կարդացէ «Մշակի» մէջ Վանայ Պողոս վարդապետի մասին գրուած պ. Մէլիքզադէի յօդուածը։ Կարծես, «Մշակը» ազդեց այստեղ։ Ազգ. Վարչութիւնն իւր առաջին նստից յետոյ անմիջապէս հեռագրեց Պողոսին յետ կոչել Վանից։ Իսկ այդ հին աղուէսը տակաւին հեռանալու նպատակ չունի իւր որջից։ Նա պատասխանած էր, եթէ իւրեանց նորից դատելու միտք կայ, թող այդ կատարուի Վանի մէջ։ Նպատակը խիստ պարզ է. այնտեղ Պողոսն իւր կողմնակիցների միջոցով ամենայն հնարներ կունենայ պաշտպանուելու...

Պատրիարգական խռովութիւնները դադարեցան։ Ներսէս Վարժապետեանը վերջապէս պատրիարգ ընտրուեցաւ։ Իսկ Երբ պէտք է սկսուն և դորան վանդելու մեքենաները լարուիլ։ այդ հեշտ գուշակելու բան է։ Որովհետև Պօլսեցին որպէս դիւրագրգիռ է դէպի սէր և ոգևորութիւն, նոյն կրքերն ունի և ատելութեան մէջ։

Բէշիքթաշի դերեզմանատունը, գտնուելով Սուլթանի պալատներից մինի հանդէպ, բարեբախտ վիճակին ենթարկուեցաւ։ Բարձ. Դրան առաջարկութեանը զիջանելով, հայ հասարակութիւնը սկըսեց ծառերով և կանաչներով պատել այդ մեռելանոցէր անապատը։ Այդպիսով գոնեա մի ամբողջ թաղ կազատուի թունաւոր օդ ծծելուց։ Կարծեմ և մեռելներին հաճելի կը լինի ծանր գերեզմանաքարի փոխարէն պառկել ծառերի հովասուն ստուերի տակ....

Փոքր Ասիոյ սովի մասին սարսափելի լուրեր են հասնում մեզ։ Ցաւալի է, որ Ասիան ուշադրութիւն չէ դարձնում իւր մէջ այդպէս յաջախ կրկնուող մի երևոյթի վերա, որպէս սովն է։ Ամեն մարդ զարմանում է, այնպիսի մի բարեբեր երկրում, որպէս փոքր Ասիան, յանկարծ մարդիկ մեռնում են քաղցածութիւնից։ Պատճառները խիստ պարզ են. չը լինելով ճանապարհների օրինաւոր հաղորդակցութիւն՝ ներսի մթերքը դուրս տանելու և դրսինը ներս ընդունելու, երկրագործական բերքը մշակվում է այնքան, որքան պէտք էր երկրագործի տարեկան ապրուստին։ Աւելի համար նա չէ մտածում, որովհետև յուսով է, թէ միւս տարի կստանայ, և այդ պատճառաւ նա աւելորդ պաշար չէ պահում։ Միւս տարին եղաւ երաշտութիւն, բերքը չեկաւ, արդէն երկրագործը տանը հաց չունի։ Որքան զգացվում է երկաթուղու կարևորութիւնը....

Հասունեանների վէճը տակաւին շարունակվում է։ Պատմագրութեան մէջ սև տառերով կը յիշատակուի այդ ողորմելիների վարմունքը։ Մինչդեռ ամեն ազգ աշխատում է թօթափել իւրեանից Հռոմի լուծը, այդ կոյր մոլեռանդները նորից սկսում են անսխալական կիսաստուածի հողաթափները լիզել...

«Մեղու» ծաղրական լրագրի խմբագիրը չնորհ տարաւ դէպի ոգիների աշխարհը։ Դա մի զգալի կորուստ էր Կ. Պօլսի հայ հասարակութիւնից։ Ախ, որքան ծաղրելի բաներ ունի այդ հասարակութիւնը...

Մխիթարեան արեղաները, որք հանգուցեալ Մուրատի կտակի զօրութեամբ կարգուած էին Փարիզի Մուրատեան վարժարանին իբրև հոգաբարձուք, ազգի անհոգութիւնից բոլորովին տիրեցին այդ դպրոցին։ Այժմ ուզում են վաճառել նորա չինուածքը։ Ազգը տակաւին Զաքարիայի լռութեան մէջն է։ Ընդհանուր հայերի կայքը դառնում է մի կաթոլիկ միաբանութեան սեպհականութիւն... Ահա, որպէս հանում են կտակներն իւրեանց նպատակին...

Որովհետև իմ նամակը բաղկացած եղաւ զանազան լուրերից, աւելորդ չեմ համարում յիշել և այդ՝ մեր հայրենակից Մ. Ամերիկեանցի երևնալն Պօլսի թատրոնական բեմի վերա՝ իւր առաջին անգամից ֆուրօր արաց։ Ես հանդիսականներից մինն էի նորա ներկայացման դիշերը։ Մշեցի Կիւկիւ—որոյ դերը կատարում էր Ամերիկեանցը—երգը, նորա հարց ու փորձը և կարօտանքը հայրենիքից, ճշմարիտն ասած, բազմութեան հոգու մէջն էր թափանցում։ Որքան ազդու է կենդանի խօսքը, որ առնուած է նոյն ժողովրդի կեանքից...

«Ախպար, գլուխներս հոտեց ադ ֆրանսիական թարգմանութիւններէն, ասաց իմ մօտ նստող պօլսեցին, ըլտայ աղուոր բան մը,—հայու մը ձայն կը լսենք բեմէն։»

Այդպէս գնահատում են այստեղ տաղանդները։ Բայց որքան համազգաց է պօլսեցին դէպի ձիրքը և գեղարուեստը, այնքան ես նորա ոգևորութիւնը դէպի դրա օդային է և անտեղեակ։ Պօլսեցին կեանքի մէջ ամեն մի աչքին զարկող յայտնութեան վերա հիացմամբ է նայում, յափշտակվում է։ Բայց ամեն մարմին, որ չուտ է տաքանում, չուտ էլ սառչում է. այդ բնական օրէնք է։

Մ.—

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

Իմ անձնական գործերիս պատճառաւ մտադիր եղայ գնալ Հաղբակ. այդ գաւառը սահմանակից է Սալմաստ նահանգին։ Օրը շաբաթ էր. կէս գիշերին մի թուրքի կարաւանի հետ ճանապարհ ընկանք, արևածագին հասանք Խանա-սօր (կարմիր պանդոկ) որն Հաղբակայ սահմանագլուխն է։ Այնտեղ ճանապարհի վերա տեսանք մի մեռեալ դիակ, արեան մէջ շաղախուած։ Սպանուածը շատ տեղերից ընդունած էր խորին վերքեր, բայց ինչ ազգից լինելն մնաց անյայտ։ Մի քանի ժամու ճանապարհ անցնելով, հանդիպեցաւ մի սայլ լծած երկու եզնով. նորան հետևում էին համարեա մի ամբողջ գերդաստան— ծնողք, նոցա որդիքը, հարսները, երեխերքը,—նոքա դիմում էին դէպի Խանասօր, ուր ընկած էր դիակը։ Այդ ողորմելի բազմութեան սպառոր դէմքերից յայտնվեցաւ, որ սպանուածի ազգականներն էին և հայազգիք...

Մեր կարաւանը հասաւ վանքի գիւղը։ Այդ գիւղը նորա համար է կոչվում „Վանքի գիւղ“ որովհետև այնտեղ է Բարդուղիմէոս առաքելոյ հոյակապ վանքը։ Նա շինուած է փոքրիկ բլուրի վերա և գեղեցիկ տեսք ունի։ Ես իշնանեցի գիւղի տանուտիրոջ մօտ. նա ինձ պատմեց ճանապարհի եղեռնագործութեան պատճառը։ Սպանուողը մի կորիճ տղամարդ էր Փանօի որդի Մարտիրոս անունով, այս ձմեռ դեռ նոր էր արել իւր հարսանիքը։ Մի քուրդ գալիս է նորա մօտ և պահանջում է յարդ իւր անասունների համար (ի հարկէ ձրի)։ Մարտիրոսը տալիս է։ Քուրդը կրկին անգամ յայտնվում է նոյն պահանջով. այդ անգամին յարդը սպառուած լինելով, չեն կարողանում նորա կամքը կատարել։ Քուրդը հեռանում է, իւր սրտում ոխ պահելով։ Գարնանը քուրդը գնում է Պարսկաստանի Սալմաստ նահանգը իւրեանց ԳԼԽաւորի՝ Ալի-Աղայի մօտ։ Մարտիրոսը նոյնպէս իւր հայ ընկերի հետ այնտեղ են գնում արորի պարագայների համար փայտ բերելու։ Ճանապարհին հանդիպում են իւրեանց թշնամուն, որը սպանում է խեղճ տղին, իւր վրէժն առնելով։

Կէսօրից յետոյ զոհաբեր սայլը դարձաւ. գիւղի բնակիչները լալով նորա առաջը գնացին։ Այդ ողբալի ամբոխի մէջն էր և սպանուածի մանկահասակ ամուսինը. նորա երեսը ծածկուած էր սև քողով. երկու կանայք, թևքերիցը բռնած, հազիւ էին կարողանում պահել սգաւորին, որոյ գրութիւնը ցաւալի պատկեր էր ներկայացնում։

Տխուր մտածութեանց մէջ դարձայ իմ իջևանը, ուր հաւաքուած էին գիւղի ծերունիքը։ Նոցա խօսակցութիւնն աւելի վրդովից ինձ, երբ պատմեցին, թէ այդպիսի չարագործութիւնները պատահում են խիստ յաճախ, որպէս քանի օր յառաջ Զուխայ սարի մէջ, Զօլամերիկի և ուրիշ ճանապարհների վերա։ Միւս օր սպանուածի ընկերը Գէորքին տանում են մերձակայ Պաշկալայի գիւղաքաղաքը դատաւորի մօտ, որքան հարցնում են, նա չէ յայտնում չարագործների անունը, վախնալով, որ քրդերն իւրեան ևս նոյն վիճակին կենթարկեն։

Թէև Հաղբակ գաւառի մասին պարոն Բաֆֆին իւր ճանապարհորդութեան մէջ (9-րդ և 10-րդ նամակ) խիստ կենդանի նկարագրութեամբ ճիշտ տեղեկութիւններ է տուել „Մշակի“ մէջ, բայց ես ևս աւելորդ չեմ համարում հաղորդել իմ տեսածը։ Հաղբակը ունի մինչև 22 հայաբնակ գիւղեր, բաղկացած 10-ից մինչև 25 գերդաստաններից, բացի Պաշկալայի գիւղաքաղաքը, որոյ բնակիչների թիւը հասնում է մինչև 100 տան։ Այդ գիւղերն ունեն եկեղեցիներ, ոմանք հին սրբատաշ քարերից չինուած, ոմանք նոր հասարակ չէնքով։ Մի քանի գիւղեր միասին հազիւ ունեն մի քահանայ, այն ևս գրաւարժութիւնից բոլորովին զուրկ։ Տեղ տեղ տեսնում ես 8—10 տղաներ մի ախոռի անկիւնում հաւաքուած, տիրացուի մօտ սաղմոս են անգիր սերտում. մի քանի գիւղերում այդ պաշտօնը կատարում է քահանան։ Երեխաների այդ տեսակ թշուառ ուսումնառութիւնը լինում է միայն ձմեռուայ եղանակին, երբ նոքա ազատ են երկրագործական աշխատութիւնից։

Բնակչաց կառավարութիւնը և նոցա գլխաւորութիւնը յանձնուած է մի վարդապետի, որը ըստ առածին՝ „Գայլոց հետ՝ ոչխարն է ուտում, հովիւներաց հետ՝ կաթը.“ Որ կը նշանակէ, թէ իւր օգուտն որ կողմն է, դէպի այն կողմը միշտ թեքվում է... Պաշկալայ գիւղաքաղաքն ունի մի աւանամբ միայն ուսումնարան, այլ ըստ ամենայնի զուրկ որ և իցէ օգտից, չնորհիւ յիշեալ հայր սուրբի...

Ժողովուրդը չափից դուրս կապուած է հնամոլ աւանդութիւններին. օրինակի համար, եթէ մէկը մի քանի մարդ սպանէ, ներվում է նորան, իսկ եթէ չորեքշաբթի, կամ ուրբաթ օրուայ պասը ուտէ, կամ մեծի պահոց ծոմը լուծէ, պատրաստ են քարկոծելու նորան։ Բայց քրդերու հարստահարութիւններից, ժողովուրդն ապրում է չափազանց աղքատութեան մէջ։ Քրդերը դաշտերից ծեծում ու տանում են ցորեանի խուրձերը, կրակ են տալիս և այրում են խոտի դէզերը. կողոպտում են տներ և ջաղացներ, յափշտակում են անասուններ, մի խօսքով, ինչ որ ուզում են անում են։ Հայերն ոչինչ չեն կարողանում անել այդ չարագործութիւնների դէմ, որովհետև դատաստանը գտնվում է նոյն իսկ քրդերի Շեյխերի ձեռքում։ Իսկ հայերի պաշտպանը մի վարդապետ է, որն իւր շահերի պատճառաւ միշտ ներողամտութեամբ է նայում այդպիսի դէպքերի վերա...

Օրը կիւրակէ էր իմ այնտեղ պատահելիս։ Հաղբակու պարզամիտ ժողովուրդն ուխտի էին եկած Բարդուղիմէոս առաքելոյ վանքը։ Ես էլ մայ այնտեղ տեսնելու այդ հանդէսը։ Խիստ ցաւալի մի տեսարան ներկայացրուց ինձ հինաւուրց տաճարը՝ նորա անկիւններում դիզուած էին ցորեանի, կտաւատի կոյտեր. պատերի տակին դարսուած էին իւղի տրկեր, մի կողմում աղի ամբար էր. առաստաղից կանդեղների տեղ քարշ էին ընկած սերի զամբիւղներ.—դրա հայր սուրբի հարստութիւնքն էին... Գիւղացի կնանիքը փառք էին տալիս Աստծուն և զարմանում էին արիաջան վանահօր տնտեսութեան վերա։ „Աստուած քեզի քո կարքին խաստատիմ (հաստատ) պախի, ասում էին նոքա, երբ տեսնում էին սերը զանբիւղների մէջ այնպէս անվնաս պահուած։ «Քա, խոշ մեր գլխին էլնի, Նարգիզ, Նազէ, Ռըհան, Ռէսի (տանուտէրի) կնիկ, մէկ արէք, տեսէք, մենք մատաղ էլնենք մեր հայր սրբի աջին և խանած խաչին, մենք էլ սեր ու եղ կը պախենք, նա էլ... Մերը երեք օր չի մնայ, կավիրվի, խամ կը փոխի, մեր եախէն կը մնայ մեր մարդերաց ձեռքը։» Երեսները խաչակնքելով շարունակում են՝ —«Ով բարի դրկեց (դրացի) Բարդաղմոս, թէ քո չնորքն ի, մեր սերերն էլ էսպէս պախես, թէ մեր հայր սրբի չնորքն ի, էնոր էն սուրբ չնորքից մէ կտոր էլ մեզի տաս ու մեր սերերաց, որ աղէկ պախվին...»

Վերջացնում եմ նամակս նորանով, որ վերոյիշեալ սպանուածի թաղումից չորս օր անցած, նորա մանկահասակ կինը, իւր սրտի մէջ մի սաստիկ վէրք ընդունելով, կը մեռնի... Թղճալին, չը կարողանալով դիմանալ սրտի կսկիծին, անձնասպանութիւն էր գործել...

19—Ապր. Աւետիս Մաթէոսեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս պատահեց Հայդլբերգում մի հրգեհ, որ ոչ մի ապահովութեան ընկերութիւնը կարող չէ վարձատրել։ Հայդլբերգի համալսարանի պրոֆէսոր երևելի քիմիկոս Բունզէնը, գուրս եկաւ իր աշխատանքի սենեակից մի կէս ժամով։ Կըրկին սենեակը մտնելով, նա տեսնում է թէ սեղանի վրա դրած թղթերը այրվում են։ Նա խկոյն կրակը հանգցրեց, բայց ուշ էր արդէն՝ նրա չորս տարվայ աշխատանքի արդիւնքը կորած էր։ Բունզէնն մի նոր գիտական գիրք էր պատրաստում, աշխատանքը վերջացրած էր և չուտով պիտի ուղարկէր տպարան, — և յանկարծ չորս տարվայ աշխատանքի արդիւնքը՝ թէ մաքուր արտագրած պատճէնը, թէ սեպագրութիւնը մի կէս ժամվայ մէջ ոչնչացան։ Աստուծոյ սեղանի վրա ընկած մնացած էին քանի մի լուցկիներ, որոնցից մինը, տաքանալով արեգակի ճառագայթներից, վառվեցաւ և կրակը դիպաւ թղթերին։

***

Մեծ-Շուշլաուէրից հաղորդում են մեզ, որ այդտեղի ժողովրդի զրութիւնը հասել է անտանելի աղքատութեան։ Հայի պակասութիւնը, զանազան խառնակութիւններ ազնուականների, գիւղականների, հոգևորականների կողմից, մոլորեցրել են ժողովուրդը։ Այսքան ժամանակ մի հնար չը կարողացան գտնել ջուր բերելու մոտիկ Բարչալու գետից։ Ահա քանի մի տարի է, որ ժողովուրդը, ոչ թէ միայն չէ ստանում իր ցանածից արդիւնք, այլ ստիպուած է լինում պարարքին պարարք աւելացնելով, ուրիշ գիւղերից հաց գնել։

***

Կ. Պոլսի «Փունջ» լրագիրը հաղորդում է հետևեալը՝ «կը լսենք թէ Բարձրագոյն Դուռն որոշեր է 5000 զուրուշ ամսական սահմանել Խրիմեան սրբազանի համար, և վավերացման համար օգուստ. Սուլթանին ուղղուեր է։»

***

Ա. . . քաղաքից գրում են՝ այստեղի բնակիչ Լ. . . մի խաչ և աւետարան (որոց պատճառով նրա տունը ուխտատեղի էր դարձած), ընծայում է քաղաքիս եկեղեցուն, որ դորա արդիւնքը նուիրվի տեղիս օրիորդաց ուսումնարանին։ Այդ բանին ընդդիմանում է մի քահանայ ասելով՝ եղբայր ձեր ես ընծայում այս սուրբ բաները մի այնպիսի անիծած հիմարութեան, ինչպէս օրիորդաց դպրոցն է. . . Ափսոս չէ, այդ արբութեանցը. . .» Բայց բաղդաւորաբար ընծայողը ուշադրութիւն չէ դարձնում եկեղեցու սպասաւորի այդ իմաստակի և բարոյական խօսքերի վրա և կատարում է իր մտադրածը։

***

Մեզ գրում են Ե. . . ից, որ հարկաւորութիւն կար քահանայ ձեռնադրել։ Տիրացուներից մինը 100 բուրլ էր տալիս, միւսը 120 բուրլ. . . Ձեռնադրվեցաւ քահանայ այն որ աւելի էր տալիս. . . Այդ էր պակաս՝ աճուրդ խօսութիւն քահանայ ձեռնադրվելու համար. . . Կեցցէ առաջադիմութիւն. . .

***

«Մասիս» լրագիրը պատմում է թէ Կ. Պոլսի երևելի հոգևոր ժողովի նստի մէջ չատերը տեսած են, ինչպէս Ա. . . վարդապետը, քուէարկութեան համար փոխանակ մէկ ձեռքը վեր վերցնելու, երկու ձեռքն էլ մեկէն վերցուցած է, որպէս զի աւելի ձեռներ երևան և մեծամասնութիւն գոյանայ համարելու ժամանակ։

***

Մայիսի 13-ին Թիֆլիսում պատահեց մի ողբերգական տխուր անցք։ Տասն և եօթը տարեկան հասակի ռուս օրիորդ Կ. . . անձնասպանութիւն գործեց, ատրճանակ արձակելով բերանի մէջ։

***

Մեր Փարիզի թղթակիցը, պ. Յարոյ, գրում է մեզ հետևեալը՝ «այստեղ լուր կայ, իբր թէ կամենում են հայոց հին լեզուի և գրականութեան ամպիոնը փոխադրել համալսարանի Collège de France բաժինը, արևելեան կենդանի լեզուների ճեմարանից, ուր հին գրաբար լեզուի փոխանակ կը մացնուի մեր կենդանի աշխարհաբար լեզուն։ Այսպիսով հայոց լեզուի երկու ամպիոն կունենանք Փարիզում։ Միթէ մեր մայրենի լեզուն այսչափ արժանաւորութիւններ ունի. . . հը. . .» — ինչ պիտի ասեն այժմ մեր աշխարհաբար լեզուի թշնամիները, մեր երևելի հին սերունդը. . .

***

«Մասիս» լրագիրը հաղորդում է որ մայիսի 5-ին պ. Ամերիկեանը, մասնակցութեամբ Կ. Պոլսի հայոց դերասանական խմբի, պէտք է ներկայացնէ պ. Գ. Սունդուկեանցի «Պէաօ» պիէսան։ Անհամբերութեամբ կը սպասենք թէ ինչ ապաւորութիւն ունեցած է Կ. Պոլսի հայ հասարակութեան վրա այդ բեմական գրվածքը որ մեր հասարակական կեանքի ճիշդ պատկեր է։

***

«Մշակի» խմբագրութեան մէջ ստացվեցաւ Վենեցիայի Մխիթարեանների հայոց տպարանի մէջ հրատարակված գրքերի ցուցակը, 1873 թ։ Այդ ցուցակը բաղկացած է 37 երեսից և գրած է ֆրանսիերէն լեզուով։ Մենք այդ վերջին ցուցակի մէջն էլ նոյն պակասութիւնն ենք նկատում, ինչպէս և նախընթացներում՝ ժամանակակից, ճիշդ գիտութիւններից վերցրած նիւթի բացակայութիւնը հայոց լեզուվ թարգմանված գրքերի թըւում։

***

Վաղը, ուրբաթ օր, մայիսի 24-ին, առաւօտեան 10 ժամին, նշանակված է Թիֆլիսի 1 բաժնի հաշտարար դատաւորի մօտ Ստաղլէնի գործը «Մշակի» խմբագրի դէմ։

***

Մեզ գրում են որ Սուրամից մէկ ու կէս վերստ հեռու գտնվող Կակալանթեան գիւղի մի վրացի կին ծնել է մայիսի 15-ին ինն մանուկներ։ (վա) Գիւղացիք պատմում են, թէ բոլոր մանուկներն էլ առողջ են և առանց որ և է մարմնի այլանդակութեան։ Մեր նամակագիրը խոստանում է դարձեալ գրել մեզ այդ անհաւատալի երևոյթի վրա։

***

Մեզ գրում են Սուրամից, որ երկար չորութենից յետոյ, վերջապէս Մայիսի 13-ին փոքր ինչ անձրև եկաւ։

***

Ն. . . քաղաքի մի քահանայ մնանկացել և պարտ լինելով մի քանի անձանց բաւական զումարներ, այժմ երբ տեսնում է, թէ էլ ոչ ոք հաւատ չէ ընծայում նրան, սկսել է իրան յանձնված օրիորդաց դպրոցի փողերն ուտել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապահովութեան Ընկերութիւն.
„ԽԱՐԻՍԽ“ („ЯКОРЬ“)
Մոսկվայում.
Ամբողջապէս մտցրած հիմնական գումարը 2,500,000 ր.

Վարչութիւն.
Նախագահ. Ե. Ի. Բաւանովսկի
Դիրեկտորներ: Ե. Ի. Բիսկուպսկի։ Կ. Կ. Բանդա։ Ն՝ Ի. Իլին։ Ն. Ա. Աբրիկոսով։

Լիազօր կառավարիչ Դ. Ա. Սենկովիչ։
Ընկերութեան Թիֆլիզի գործակալութիւնը բացուած է ապրիլի 9-ին և ընդունում է.

1) Ապահովութիւն կրակից ամեն տեսակ շարժական և անշարժ կայքի։

Ընկերութիւնը վարձատրում է բոլոր առաջացած վնասները հրդեհից, որոնք պատահումեն անբաղդ դիպուածներից, չը բաց առնելով և կայծակից, վարձատրում է նմանապէս և այն վնասները, որոնց կրում են ապահովված կայքերը այն միջոցներից, որոնց գործածելը անհրաժեշտ էին հրդեհը հանգցնելու, կամ նրա առաջն առնելու համար, վարձատրում է նմանապէս ապահովեցնողի կայքը ազատելու ժամանակ առած անհրաժեշտ ծախսերը, Ընկերութեան կանոնադրութեան համեմատ։

2) Ապահովութիւն տրանսպորտների ամբողջ Ռուսաստանի և Եվրոպայի ճանապարհների վրա։

Ապահովութիւնը սկսվում է ապրանքի ճանապարհի վրա ընդունելու րոպէից և վերջանում է նրան ստացողին նշանակուած տեղը յանձնելուց յետոյ։

Ընկերութիւնը պատասխանատու է նմանապէս տրանսպորտների ճանապարհին գողանալու և կորչելու համար առանձին պայմաններով։

3) Ապահովութիւն գումարների (կեանքի) և մուտքերի։

Պրեմիայի գնահատութիւնը աւելի ցածր է, քան թէ ուրիշ ընկերութիւնների մէջ. բժշկի վկայելու և ուրիշ ծախսերը—Ընկերութիւնն ինքն է յանձն առնում։

4) Կարճ ժամանակից յետոյ կը մտցուի ապահովութիւն ցանքերի ԿԱՐԿՏԻ ԽՓԵԼՈՒՑ։

Գործակալութեան գրասենեակը գտնվում է Երևանեան հրապարակի վրա, քաղաքային վնասութեան տան մէջ, Թիֆլիզում։

Ագենտներ՝ Խ. Խաչատուրեան և Ց. Տէր-Գրիգորեան։



Գոստինովսկի փողոցում, Թիֆլիզի Առևտրական Բանկի վերև, Միրզոևի տան մէջ նոր բացուած զանազան տեսակ շլեապանների մագազինում ստացուեցան ՓԱՐԻԶԻՑ մեծ քանակութիւն ամառային շլեապանների և գլխարկների։ Շլեապանները՝ ցիլինդր, յարդեայ, զանազան տեսակ և գոյնի՝ պարուսիրի, ալպակի և ապրեշումի, թէ երեխանց և թէ մարդկերանց համար։ Ստացուեցան նմանապէս մարդկերանց համար զանազան տեսակ գեղեցիկ և լաւ հովանոցներ (զոնտիկներ) և գալոշներ։ Կանանց համար ստացուեցան կորսետներ, թեանոցներ (բուկվէյկի), կրծկալներ (մանիշկի), փողոցաներ (գալուստիկ) վերջապէս կանանց տուալետի մանրամանների բոլոր սեպհականութիւններ։

Ընուշահոտութիւնների (պարֆիւմրի) ամեն տեսակները կան։

Վերոյիշեալ բոլոր ապրանքները ծախվում են շատ էժան գնով։

Գրաֆանների համար ստացուել են առանձին տեսակ շլեապաներ 1 ր. մինչև 3 բուրլ գնով։ 3 (3)

Իմ անակնկալ գնելուս պատճառով, մանկական պարտիզում և տարրական ուսումնարանում ուսումը ընդհատվում է Մայիսի 1-ից։ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶԸ և ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ ես յանձնում եմ տիկին ԺԱԲԱՑԻՆ։ Ուսումը կը սկսուի Սեպտեմբերի 1-ից։

3 (3) Աղէքսանդրա Սիմոնովիչ։

ԱՅԳՈՒ ՃՐԱԳԹԱԹՆԵՐ (բաղի շամատանները) շատ յարմար պարտէզներում և թէ ամառանոցում գործ ածելու։ Ծախվում է արժան գներով Ե. Ծատուրեանցի խանութում պ. Շաբուրովի տներում։

САДОВЫЕ ПОДСВѢЧНИКИ весьма удобные для дачи. Продаются по дешевымъ цѣнамъ въ Депо лампъ Е. Цатурова въ домѣ г. Шабурова. 1 (3)

Պամուկի տակից դուրս եկաւ „ԵԻՏՈՒՇԵԻՍԿՈՒ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ“ առաջին մասը Հայ լեզուով։ Աշխատասիրութիւն Մարտիրոսի Սիմէօնեանց։

Ծախվում է պ. Պարգանեանցի և ընկ. գրավաճառանոցում և „Մեղուի“ խմբագրատեղը։

Գինն է 60 կ., 10 հատ գնողների համար 55 կ. 100 հատ գնողներին 50 կ։ 3 (3)

ՏԵՂԵԿԱՑՈՒՑ

ՄԱՅԻՍԻ 23. ԹԻՖԼԻՍ. 1874.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մայիսի 22-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլումպրիալ) . .	5	97
Բամբակ Երևանում (հին սերմից) . .	4	20
„ Ամերիկայի սերմից	5	85
Բուրդը թուչի . . .	7	
թարաքամի . .	4	
Շաքարը ռսի (բրօցկու)	8	40
„ միւս տեսակը .	8	30
„ ղազրան, տարանդիա . . .	5	20
„ մաքսը վճարած	8	20
Շաքարաւազը Ռսի . .	6	70
Ղահվա Լիվանի լաւը . .	18	50
„ Մոկո չատ լաւը	20	
„ Մարաբեկօի ցածր	16	50
Աւլիւրը Երևանի . . .	1	40
Աւլիւրը Գանջու հասարակ	1	45
„ Շորագեալու .	1	50
Գարին	„	70
Մոմ.	10	90
Փոխանակագիր Պօլսի	6	65
„ Գավրէժի	4	59
Լօնդոնի կուրսը (Օդեսայի վիրայ) 1 լիրան արժ է. .	7	25
Մարսէլ և Փարիզ 348 ֆր. արժ է.	100	

ՓՈՍՏ

Ռուսաստան և Արտասահման ամեն օր։

Երկուշաբթի
Երևանի գաւառ, Քութայիս, Զէրնամօրի վիճակ, Սուխում։

Երեքշաբթի
Բաղու, Գանձակ, Դաղստանի նահանգ (թեմի փոստը)։

Չորեքշաբթի
Քութայիս, Ալէքսանդրապօլ, Ախալցխա։

Ուրբաթ
Երևան, Քութայիս, Նուխի Զաքաթալ, Ախալցխա։

Շաբաթ
Բաղու, Գանձակ (ծանր փոստը)։

	Կոպ.
Բաց նամակը ժէ. .	5
Ռուսաստան նամակը	10
Գերմանիա, Աւստրիա	10
Ֆրանսիա.	13
Անգլիա	14
Շվեյցարիա.	14
Թուրքիա (Կ. Պոլիս .	20
Թիւրքիա (ցամաք) . .	20
Իտալիա	16
Ամերիկա	28
Պարսկաստան . . .	10
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ՓՕՏԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 8 ժամին 18 րոպէ առաւօտեան։ Մինչև Սուրամ (խառն գընացքը) երեկոյեան 8 ժամ. 17 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	8. 18	8. 17
Մցխէթ . . .	9. 18	10.
Գորի. . . .	11. 39	1. 43
Սուրամ. . .	1. 52	4. 30
Քութայիս . .	7. 55	
Փոթի. . . .	11. 27	

	առաւօտ.
Փոթիից . .	7. 38
Քութայիս . .	10. 12
Սուրամ. . .	4. 57
Գորի. . . .	7. 23
Մցխէթ. . .	9. 52
Թիֆլիս. .	10. 49

Թիֆլիս գալիս է ճանապարհորդների գնացքը երեկոյեան 10 ժամին 49 րոպէ։

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գորի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Քութայիս	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՀԵՌԱԳԻՐ

Քանի բառից կազմված հեռագիրը ժէ՝

	Ր.	Կ.
Ալէքսանդրապօլ .	1	
Ախալցխա . .	1	
Ատարխան . .	2	
Բաղու	1	
Գանձակ. . . .	1	
Գորի. . . .		50
Երևան	1	
Շամախի. . . .	1	
Կօդժոր		50
Քութայիս . . .	1	
Մօզդօկ. . . .	1	
Մոսկվա. . . .	2	
Ս. Պետերբուրգ .	3	
Հին Նախիջևան .	1	
Նոր-Նախիջևան.	2	
Նիժնի-Նովգորոդ	2	
Փոթի.	1	
Աստրխան . . .	2	75
Անգլիա. . . .	3	75
Գերմանիա. .	2	63
Թիւրքիա (Երզրում)	3	
„ (Փոթիով)	3	75
Ֆրանսիա . . .	3	50

ՓՕՍՏԻ ԿԱՌՈՒՑԸ

Թիֆլիսից Վլադիկավկաս ամեն օր՝ ամառը 6 ժամին կէս օրից յետոյ իսկ ձմեռը 4 ժամին։

Թիֆլիսից Պիատիգորսկ, Աստրախան և Բաքու՝ հինգ շաբթի և շաբաթ օրերը 6 ժամին առաւօտեան։

ՆԱՒԵՐ

Օդէսայից Փոթի (ամառը) նաւը դուրս է գալիս հինգշաբթի օրերը ժամը 2-ին կէս օրից յետոյ։

Փոթիից Օդէսայ՝ կիրակի 6 ժամին կէս օրից յետոյ։

Օդէսայից Փոթի (ձմեռը) հինգշաբթի օրերը 3 ժամին։

Փոթիից չորեքշաբթի օրերը առաւօտեան։

Փոթիից Կ. Պոլիս նաւը դուրս է գալիս կիրակի առաւօտները։

Կ. Պոլսից Փոթի կիրակի առաւօտները։

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Երթևեկ հիւանդների համար գտնվում է Ս. Նշան եկեղեցու մօտ եղած Ղարաչիի տանը և բաց է ամեն օր հիւանդների ընդունելութեան համար առաւօտը 9 ժամից մինչև 1 ժամը։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄՈՒԶԵՈՒՄ

Բաց է երեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը, առաւօտը 10 ժամից մինչև կէս օրից յետոյ 5 ժամը.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Բաց է ամէն օր, բացի կիրակի և տօն օրերից 12 ժամից մինչև կէս օրից յետոյ 5 ժամը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

(Մայիսի 10-ին)

Լօնդոն մի բուրլ ժէ	34 1/32 պէնս (փոխանակ 40 պէնս)։
Փարիզ մի բուրլ ժէ	357 սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։
Առաջին 5% փոխառութեան տոմսակ	170 1/2
Երկրորդ	166
5% քանկի տոմս. 1 յունվարի	97 1/4
„ „ „ 2 „	97
„ „ „ 3 „	97

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Դէրբէնդ. Մի. Սա. Յանձնէք առնում Ց. Բաղ. . . հաղորդած մասին պատասխանատուութիւնը։

—Բագու Ա. Գ. Յայտարարութիւնը ստացանք և կը տպենք։

—Շամախի. Ա. Ս. Ա. Մեթէ դուք կարծում էք որ աշխարհս երեսին ամեն ճշմարտութիւն կարելի է ասել. . .

—Յիւրիխ. Մ. Պապիեան. Ձեր նամակը տարվեցաւ և «Մասիս» մէջ։ Գրեցէք ինչ զրութեան մէջն է մեռեալներ այրելու հարցը Շվեյցարիայում։ Նիթ չատ տընենք, եթէ ոչ կը չատպէնք տարսկ ձեր նամակը Յիւրիխի մեղուականներին մասին։

Дозволено Цензурою. Тифлисъ, 23 Мая 1874 г. Типографія Меликова и К-°

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ